6. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ „ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

---

6. Թումանեանի բանաստեղծութիւնների մասին իմ կարծիքը լայտնելուց առաջ, ես ուզում եմ մի քանի խօսք ասել մեր Նորագոյն բանաստեղծութեան մասին և որոշել այն դիրքը, որ բռնեց մեր քննադատութիւնը և մամուլը այս նոր երևոյթի նկատմամբ։ Կան մարդիկ, որոնք կարծես սրտի ցաւով պնդում են թէ մեր բանաստեղծութիւնը ընկնում է նոր ոտանաւոր-գրողների չնորհիւ։ Բայց ինձ թւում է, որ հայկական վաղուց թառամած բանաստեղծութիւնը ութսունական թւականների վերջում նորոնոր սկսում է ծաղկել, և այս բանը ինձ ուրախութիւն է պատճառում։ Սա մի երեոյթ է, որ ունի իւր հասարակական պատճառները և որ անուշադիր չէ մնալու գրականութեան ապագայ պատմաբանից։ Թէ ինչու այս կամ այն ժամանակներում երևան են գալիս մի տեսակ գրողներ,—ողբերգակներ, վիպասաններ կամ բանաստեղծներ, և գրականութեան այս կամ այն ճիւղը գերիշխող է դառնում, այդ խնդիրը պէտք է որոնէ իւր պատասխանը հասարակական կեանքի ընդհանուր պայմանների մէջ։ Ասածս ի հարկէ կարօտ չէ ապացոյցների. նոր բան չէ այն միտքը թէ գրականութեան և հասարակական կեանքի մէջ կայ մեծ և փոխադարձ աղերսութիւն, և եթէ այսօր մենք նկատում ենք, որ մեր բանաստեղծութիւնը այս վերջին տարիներս սկսում է աչքի ընկնող տեղ բռնել գրականութեան մէջ, իրան ցոյց տալ, այդ հանգամանքը ի հարկէ արժանի է լուրջ ուշադրութեան և խրախուսանքի։

Բայց ինչպէս վերաբերուեց մեր մամուլը դէպի մեր նոր բանաստեղծները։

Սոցա մասին այս կամ այն լրագրում լայտնուեցին կարծիքներ գրախօսութեան, քննադատութեան և լուրերի ձևով։ Նոցանից մի քանիսը գտան լայնող թէ անլայնող գնահատութիւն. իսկ առհասարակ մեծամասնութեան վերայ լուրջ ուշադրութիւն չը դարձրին, և չատերը, որոնք արժանի են քաջալերութեան, մատնուեցին կամ ծաղրի կամ լռութեան։ Դէպի մեր

նոր բանաստեղծները այս տեսակ հնգնական գիրք բանելու մէջ կարծես կար մի ցանկութիւն նմանել այն գրողներին, որոնք մի ժամանակ աշխատում էին մտրակել Ռուսաստանում աճած բազմացած անշնորհ ոտահիւսներին։ Բայց դորա դէմ պէտք է ասել միայն այն, որ մեր նոր բանաստեղծներին հարկաւոր է համեմատել ոչ թէ ոտահիւսների հետ, այլ Ռուսաստանի գոնէ միջակ գրողների հետ, որոնց վերայ քննադատութիւնը միշտ պատշաճաւոր ուշադրութիւն է դարձնում և որոնք գտնում են իրանց համապատասխան տեղը գրականութեան պատմութեան մէջ։ Ի հարկէ ամենալաւը՝ ապագան կ'որոշէ այն բանը թէ որքան արժանաւայել է եղել մեր մամուլի բռնած դիրքը դէպի վերոյիշեալ նոր երևոյթը. բայց առայժմ իմ կարծիքը այն է, որ մեր նոր բանաստեղծութեան գնահատելու վերաբերմամբ մեր մամուլը եղել է անտարբեր, միակողմանի և կամ թշնամական։ Յ. Յովհաննիսեանի «Բանաստեղծութիւնների» լոյս տեսնելուց մինչև Յ. Թումանեանի «Բանաստեղծութիւնների» երևան գալը, այսինքն 1887 թ. մինչև 1890 թ., նշանաւոր ժամանակամիջոց է մեր բանաստեղծութեան պատմութեան համար. այս խօսքերի ճշդութիւնը, ես կրկնում եմ, ամենալաւը կ'որոշէ ապագան, 10—15 տարին։

Յ. Թումանեանը դեռ ևս բոլորովին երիտասարդ է և առաջին անգամ յայտնւում է հասարակութեան մօտ 100 երեսանոց գրքոյկով. դա նորա առաջին փորձերի ժողովածուն է։ Ահա մի հանգամանք, որ ամեն մի քննադատի ձեռքը պիտի պահէ հեղինակի համար գուցէ թանկագին ամբողջ երեսներ սևացնելուց և հարկադրէ նորան ներողամիտ լինելու դէպի դեռահաս բանաստեղծը, դէպի գրականութեան նոր հիւրը։ Մեր այս նոր հիւրը անկոչ չէ. նա ունի արժանաւոր կողմեր, որոնց շնորհիւ հեշտանում է քննադատի գործը, և էլ նորանից պահանջւում չէ մի առանձին ներողամտութիւն. թէև, որքան կամենում ես, նորա պակասութիւնները. պէտք է խօսել և նորա արժանաւորութիւնների մասին։

Նախ և առաջ ես ուզում եմ մատնացոյց անել այն բոլորին, որ մեր գրողի բանաստեղծական ընդունակութեան ապացոյցներ է տալիս, և ապա նորա պակասութիւնը որոշելուց յետոյ՝ ես կը վերցնեմ նորա մի քանի գրուածները վերջիններիս մասին աւելի երկար խօսելու համար։

Յաջողուած մի քանի ոտանաւորները, պօէմաների մէջ գեղեցիկ կտորները, բանաստեղծական պատկերները, բաւականին կանոնաւոր լեզուն, պարզ, սոսկական ոճը և մասամբ յաջողուած տաղաչափութիւնը— ահա այն նշանները, որոնք տեղի չեն տալիս կասկածելու մեր գրողի բանաստեղծական ընդունակութեան մասին։ Արժէ բերել նմուշներ այդ կտորներից։ Ահա օրինակ ինչպէս է նկարագրում գիւղացու հասարակ նուաղածութիւնը և ժողովրդական երգերի ընդհանուր բովանդակութիւնը.

Հնչում է ջիգիթ Սաքօյի չհուն.
Իսկ ընկերներից մէկը սրտալի
Երգում է, կանչում, ինչքան ձայն ունի.
Եւ մելամաղձոտ նրանց բայաթին
Գովեստ է տալիս վեհանձն ջիգիթին,
Կամ հայրենիքի հողին ու քարին,
Սիրավառ կանչում սևաչեայ եարին. («Լօռեցի Սաքօն»)

Միթէ այս տողերը մեր աչքի առջև չեն պատկերացնում մեր սրտին մօտիկ մի շատ ծանօթ և հարազատ տեսարան. Այս տողերում ես չեմ գտնում մի բառ, որ աւելորդ լինէր կամ ոչ իւր տեղումը, մի աւելորդ հնչիւն, որ գրուած լինէր ոճը կամ չափը գեղեցկացնելու համար. Հասարակ, անպաճոյճ խօսքերով այստեղ նկարագրուած է մի բանաստեղծական գեղեցիկ պատկեր, մի գեղարւեստական ամբողջութիւն. Ահա նա ինչ բաների հետ է համեմատում արշալոյսը.

Ամպերի միջից արջնաթոյր և թուխ
Բացւում է արշալոյսն, ինչպէս հրաբուխ,
Կամ թէ բոցավառ հրդեհի նման,
Որ թանձր ծխից յայտնւում է իրան. («Լօռեցի Սաքօ»)

Արևի մայր մտնելը մեր բանաստեղծը նկարագրում է հետևեալ կերպով.

Վերջին շողերն արևի
Կատարներին ծառերի
Դողդողացին ու յանկարծ
Թռան ծայրերը լերանց. («Ալէքօ»)

Ահա մի երեք տողով ինչպէս է նկարագրում անտառը փոթորկի և մրրկի միջոցին.

Եւ թանձր անտառը՝ սաստիկ հողմակոծ,
Երբ փշշացնում է, ինչպէս մի սև օձ,
Թեքւում տնքում է ծառը հաստարմատ. («Լօռեցի Սաքօն»)

Այստեղ ի հարկէ պատկերի տպաւորութիւնը թուլանում է «ծառը» հաւաքական մտքով գործածելուց. այստեղ «ծառերը» աւելի արագ կը նկարագրէր անտառի դրութիւնը.

Խօսելով մեր գրողի արժանաւորութիւնների մասին, ես չը [illegible] նորա մի առանձնայատկութիւնը. Նա իւր պօէմաների մէջ նման չէ ոչ մեր հին, ոչ նոր բանաստեղծներին. Նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրոյն է, նա մի տեսակ նորութիւն է մեզ համար. Այդ առանձնայատկութիւնը *ժողովրդական տարրն* է, որ և կազմում է նորա վի-

պական ոտանաւորների իսկական զարկերակը։ Եւ իրաւ, ցոյց տուէք մէկին, որ այնպէս սիստեմաբար և այնքան լաջող կերպով ոտանաւորների նիւթ չինած լինի հայ գիւղացու կեանքը, ինչպէս այդ տեսնում ենք մեր բանաստեղծի պօէմաների մէջ։ Նոքա ունին ներքին ընդհանուր գծեր, որոնք են ժողովրդական տարրը, ինչպէս ես վերև նկատեցի, և վիպական արտաքին ձևը։ Բայց այս ընդարձակ ոտանաւորների մէջ աչքի է ընկնում մի մեծ պակասութիւն, դա պօէմաների թոյլ արհեստական կազմածքն է, նոցա անհետաքրքրական լինելը ամբողջութեան տեսակէտից։ Բովանդակութեան կողմից լաջող է միայն «Ալէքը» և ամենաբանաստեղծական—«Արև և լուսինը»։ «Նահատակը» մի երկայն ոտանաւոր է, որ նկարագրում է մի խաչի թէ նահատակի հրաշալի զօրութիւնը. լաջող կտորներ կարելի է գտնել, բայց ամբողջութիւն չը կայ, և թեման ինձ թւում է անլարմար երկայն ոտանաւորի նիւթ դառնալու։

Ոչ մի պօէմայի մէջ պ. Թումանեանը իրան ցոյց չէ տալիս այնքան բնորոշ գծերով, իւր արժանաւոր և թերի կողմերով, որքան նա այդ անում է «Լօռեցի Սաքօ» ոտանաւորի մէջ։ Բովանդակութեան կողմից այս պօէման հետաքրքրութիւն չէ ներկայացնում։ Ինքը Սաքօն, պօէմայի հերոսը, գրեթէ ոչինչ չէ գործում. նորա արածը գլխաւորապէս այն է, որ գիշեր ժամանակ մենակ մնալով ձորում չինած մի տնակի մէջ և միտը բերելով փոքրութիւնից լսած պատմութիւնները չար ոգիների մասին, գրգռւած երևակայութեան տակ կամաց կամաց սկսում է վախենալ, սարսափած դուրս է վազում գէպի ձորը. նորան հետևում են չար ոգիները, նա ամենուստէք լսում է ձայներ. «բռնեցէք, ապատեղ է Սաքօն» և պօէման վերջանում է հեղինակի նկատողութեամբ թէ Սաքօն միւս օրը տուն կ'երթայ և իւր տեսած երևոյթներով կը հաստատէ այն, ինչ պատմել է նորա նանը իւր փոքրիկ թոռներին։ Դա է պօէմայի գլխաւոր բովանդակութիւնը, նորա հիմնաքարը։ Բանաստեղծի նպատակն է եղել, ըստ երևոյթին, պարզել այն խնդիրը թէ ինչպէս են պահպանում և ինչու կարողանում են պահպանել ժողովրդական զանազան սնապաշտութիւնները. այդ խնդիրը պարզելուն հեղինակը նուիրել է իւր գրքոյկի ամբողջ 16 էջերը։ Եթէ այս պօէմայի մէջ ցանուած չը լինէին ամբողջ գեղեցիկ կտորներ, պօէման կը լինէր մի շատ ձգձգուած երկայն ոտանաւոր, տաղտկալի ընթերցանութեան համար, գուցէ անարժան ուշադրութեան։ Ամբողջութեան թուլութիւնը—ահա մեր բանաստեղծի անբաւարար կողմը, առանձին գեղեցիկ կտորները պարզ ապացոյցներ են նորա բնատուր ընդունակութեան։ Հասարակ ժողովրդի շատ սնապաշտութիւնները, նորա ուրախանալու արտայայտութիւնը, պարերի և նւագածութեան նկարագրութիւնը, բնութեան մի քանի գեղեցիկ պատկերների կենդանագրութիւնը—այս բոլորը դուրս է բերուած այնքան լաջող, որ ընթերցողին տեղի չէ մնում կասկածելու թէ բանաստեղծը քաջ տեղեակ է այն կեանքին և

բնութեան, որ իւր ոտանաւորի նիւթ է դարձրել։ Այդ կտորներից մի քանիսը, իբրև նմուշներ, ես արդէն առիթ ունեցայ բերելու «Լօռեցի Սաքօն» ստոր լինելով «Ալէքսի» ֆաբուլայի կողմից, գերադասելի է Նորանից իւր բազմաթիւ գեղեցիկ կտորներով։

Ես դիտաւորութիւն չ'ունիմ երկար կանգ առնելու բոլոր պօէմաների վերայ. ես վերցրի ամենաբնորոշը՝ Նորա արժանաւոր և թոյլ կողմերը ցոյց տալու համար։ Պ. Թումանեանի մանր ոտանաւորների մէջ կայ մէկը, որ իւր բովանդակութեամբ մօտիկ է կանգնած պօէմային և Նորա վիպական ոտանաւորներից ամենաբանաստեղծականն է. Դա «Ամառային գիշերը գիւղում» ոտանաւորն է։ Նորա ոտանաւորների մասին կարելի է մի ընդհանուր բան ասել. Նոցա մէջ կան լաւերը, կան վատերը. բայց մեծամասնութիւնը միջակ է, ոգևորելու անընդունակ ոչ իւր զգացմունքներով, ոչ իւր մտքերի թարմութեամբ։ Բացի դորանից, Նորա մանր ոտանաւորների մէջ չէ տարւած այն ինքնուրոյնութիւնը, որ Նկատւում է Նորա պօէմաների մէջ. մանր ոտանաւորների թեմաները և արտայայտելու ձևերը երբեմն յիշեցնում են այս կամ այն բանաստեղծութիւնը։ Օրինակ, Նորա «Մարգարէն», յաջողւած ոտանաւորներից մէկը, յիշեցնում է Յ. Յովհաննիսեանի «Երբ Նա դեռ Նոր էր լոյս աշխարհ տեսել» ոտանաւորը և դուցէ ազդւած է այս վերջինից, թէպէտ առաջինը արտայայտւած է աւելի կոնկրէտ կերպով այն ձևով, որ աւելի յատուկ է բանաստեղծութեան։ Յաջողւածներից է Նորա սիրուն մի ոտանաւորը—«Ներիր, ով կոյս», որ լաւ տպաւորութիւն է անում մարդու վերայ որքան իւր սահուն ոճով, Նոյնքան և անկեղծ զգացմունքներով։ Լաւ է և Նորա «Չարամիտներին» բանաստեղծութիւնը, մանաւանդ ուժեղ են Նորա վերջին տողերը.

Կը հասնի Նա ձեզ, բարկութեամբ արդար
Արժանի մահով պատուհասելու,
Եւ ով պիտի ձեզ ցոյց տայ ճանապարհ
Նորա բարկութեան պատժից փախչելու։

Այս տողերից լսւում է մի տեսակ սպառնալիք չարամիտներին և միևնոյն ժամանակ խղճահարութիւն Նոցա անկման պատճառով։ Մի քանի ոտանաւորների մէջ հաւաքւած և իրար ետևից շարւած են բարոյական զանազան հասկացողութիւններ խրատներ. այս վերջինները կազմում են բանաստեղծի զայրոյթի և վշտի առարկան։ Բարոյականութիւնը, ընդհանուր կերպով առած, բանաստեղծութեան նիւթ շինելը դժւար բան է, տասից մէկը հազիւ կարող է յաջողւել, իսկ շատերի կարծիքով երբէք չէ յաջողւում։ Այս ոգով է գրւած «Երանութիւն էր խոստացել լոյսս ինձ» ոտանաւորը, որի միտքը, թէպէտ Նոր չէ, բայց լաւ է և արտայայտւած է հետևեալ տողերում.

Երանութիւն էր խոստացել լոյս ինձ.
Սակայն չը գտայ նրան կեանքի մէջ,
Բայց չեմ վհատիլ, անսպառ մէկ իղձ
Դեռ ինձ մղում է դէպ լաւագոյն անվերջ։

Այս անսպառ իղձը այն է, որ ներկան կը քանդուի, և նորա աւերի վերայ «ապագան կը կանգնի, լուսոյ նշանը»։ Միտքը, ասացի, նոր չէ, բայց այդ ոտանաւորի պակասութիւնն էլ չէ։ Մեզնից ով կարող է պարծենալ թէ արտայայտել է կամ արտայայտում է ընդհանուր նշանակութիւն ունեցող նոր մտքեր։ Մեր այսպէս կոչուած նոր մտքերը տասնեակներով և հարիւրներով կարելի է գտնել համաչխարհային հանճարների գրուածներում։ Ուրեմն բանը մտքի նորութիւնը չէ, այլ նորա արտայայտելու նոր ձևն է և լայող արտայայտութիւնը։ Գարնան և սիրոյ երգերը առաջին անգամ հնչել են այն ժամանակ, երբ մարդիկ զգացել են սէր և հիացել են գարնան գեղեցկութեամբ. նոքա հնչում են և մեր օրերում, նոքա կը հնչեն և ապագայում, քանի աշխարհում կը լինի սէր և գարուն։ Այն բանաստեղծները, որոնք գեղեցիկ և նոր ձևերով կարող կը լինին արտայայտել և գեղեցիկ և թարմ մտքեր, նոքա սիրով կ'ընդունուեն և կը մտնեն արդէն հանճարների կամ մեծ տաղանդների շարքը։ Բայց երբ չը կան գեղեցիկ և թարմ նոր մտքեր, բանաստեղծից պահանջուում է գեղեցիկ և նոր ձևերով նոցա արտայայտութիւնը։ Մեր վերև յիշած ոտանաւորի միտքը լաւ լինելով՝ արտայայտելու ձևը շատ սովորական է, դանդաղ և տղեղ։

Եւ այստեղ կը բերեմ մի փոքրիկ ոտանաւոր, որ, թէպէտ և իմ աչքում այնքան դին չ'ունի, բայց կարող է վէճի առարկայ դառնալ և տեղի տալ բոլորովին հակառակ կարծիքների։ Դա «Միամիտների» ոտանաւորն է, որ և կը բերեմ ամբողջովին.

Երանի է ձեզ, որ չէք հասկանում
Թէ մարդիկ ինչու ինչեր են անում.
Երանի ձեզ, որ մարդու չէք զրկում
Եւ ոչ ձեզ հասած հարուածն էք զգում.
Երանի ձեզ, որ ոչինչ չը գիտէք,
Որ հոգով անդորր, սրտով հանգիստ էք։

Ի՞նչ եզրակացութիւն անենք այս ոտանաւորից. այն, որ բանաստեղծը նախանձում է նոցա, որոնք ոչինչ չեն հասկանում, ոչինչ չեն զգում, ոչոքի չեն ճնշում և հոգով անդորր են։ Աւելի լաւ էր երանի տալ անչունչ առարկաներին, որովհետև նոքա բոլորովին ոչինչ չեն զգում, իսկ միամիտները կարող են քիչ թէ շատ թէ զգալ թէ հասկանալ թէ ճնշուել։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, սա մի բաւականին տարօրինակ ցանկութիւն է՝ ընդհանուր խօսքերով և դանդաղ տողերով արտայայտուած։ Բայց եթէ բանաստեղծը ուզում է ասել թէ

երբեմն նորան ալցելում են այնքան դժուար բոպէներ, որ նա ակամայ երանի է տալիս նոցա, որոնք բան չեն զգում, թող հէնց այդպէս էլ ասէր։ Սիալ մտքերը և տարօրինակ զգացումները ներել գրողին, արդարացնելով նորան բոպէական աղդեցութեամբ, անկարելի է։ Բանաստեղծը պիտի լինի հետեողական իւր մտքերի և զգացումների արտայայտման մէջ. այլապէս նորա ոտանաւորները լինելու են իրար հակասող և չատ անգամ—կեղծ։

«Գիշերային առաջին աստղի դիմաց» ոտանաւորը եթէ սպաւորութիւն թողնում է, գլխաւորապէս բանաստեղծական լեզուի չնորհիւ է, բովանդակութիւնը անհետաքրքրական է։ Հեղինակը թւում է մի քանի գործեր, որ ժարդիկ տրամաղրւում են անելու գիշեր ժամանակ։

Բոլորովին առանձնակի կանգնած է մի ոտանաւոր—«Աղօթքը». դա մի անլաջող փորձ է երդիծաբանական բանաստեղծութեան և միանգամայն տալելու անարժան։

Չը փչած ոտանաւորները մի առանձին բան չեն ներկայացնում։ Նոքա ոչ այնքան լաւ են, որ հիացնեն, ոչ այնքան վատ, որ տաղտկացնեն. նոքա միջակ են, նոցա կարելի է կարդալ։

Ես կամենում եմ մի քանի խօսք էլ ասել պ. Թումանեանի լեզուի, ոճի և տաղաչափութեան մասին։ Լեզուն բաւականին կանոնաւոր է և հարուստ բառերով. բայց պատահում են չեղումներ այն ճանապարհից, որով ընթանում է մեր այժմեան գրականական լեզուն. օրինակ, նա գործ է ածում և այսպիսի ձևեր, «աչքէս», «թողնուլ», «դուն», «կնանոնց», «հասանել», երկրին կոչել» և այլն։

Նորա պարզ հասարակ ոճը երբեմն դառնում է հակիրճ, արտահ և եռանդուն. օր.՝ Ալի աւաղակի չարագործութիւնների համբաւը, որ անցնում է բերանից բերան, նկարագրւած է այսպէս.

Ալին ծեծեց... Ալին տարաւ...
Ալին այսօր թալան արաւ.
Ալին երէկ մարդ սպանեց.
Ալին սարիցն ապրանք քշեց.
Կրակ տուեց սրա դէզը,
Խլեց նրա մի լուծ եզը.
Ալին հանդում քաղաւոր ճանկեց,
Մի նորահարս առանձգեց.
Ալին ծեծեց... Ալին տարաւ...
Ալին խլեց... Ալին կերաւ... («Ալէք»)

Տաղաչափութիւնը դեռ բոլորովին կատարեալ չէ. լաճախ պատահում են պակաս վանկեր, որ տգեղացնում և դանդաղեցնում է տողերի սահունութիւնը։ Մի քանի բացառութեամբ, բանաստեղծի ոտանաւորները գրւած են միակերպ. նոքա տասը վանկանի են։ Մի օրինակութիւնը

նորա տաղաչափութեան թոյլ կողմն է։ Ոտանաւորի տպաւորութիւնը կախւած է նորանից թէ որքան լաջող, համապատասխան է ընտրւած ալս կամ այն չափը՝ ալս կամ այն մտքի կամ զգացման համար։

Ընդհանրապէս իմ կարծիքը ալս է պ. պ. Թումանեանի մասին. նորա մի քանի արժանաւոր կողմերը—գեղեցիկ առանձին կտորները, մի քանի լաջողւած ոտանաւորները, հասարակ, պարզ ոճը գրաւական կարող են լինել մեզ համար նորա բանաստեղծական ընդունակութիւնների զարգանալուն։ Միւս կողմից նա մի տեսակ նորութիւն է մեզ համար պոէմաների մէջ տիրապետող ժողովրդական տարրի չնորհիւ։ Նորա մեծ թուլութիւնն է՝ գեղարւեստական ամբողջութիւն դուրս բերելու անկարողութիւնը։ Տեխնիկալի կողմից նորան մնում է աւելի կանոնաւորել լեզուն և խոլս տալ, որտեղ կարելի է, տաղաչափական միօրինակութիւնից։